

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յէջ 281)

81. Ամիճ.

Այս բառս պատմիչ մեր Եղիշէ գործածեր է (Ը.) իրրեւ քնքուշ կերակուր մի « փափկասուն Տիկնայց Հայոց աշխարհին... որ ի մանկութենէ իւրեանց սնեալ » էին ուղղովք զուարակաց և Ամփովք երէցոց » . հաւանօրէն նշանակէ Ամիկ, այծու ձագ . իսկ Բուզանդ կ'ըսէ (Ե) , թէ մեր տարաբաղդ և աշագուրկ Արշակ Թափաւորին առնել յետ կերակրոց՝ զրին « Միրզ, Խնձոր, Վարունգ և Ամիճ » . և կարծել տայ թէ պտուղ մ'ըլլայ, զուցէ նոյն իսկ Ամիսն, եթէ կտրենայ սա ախորժելի ըլլալ քմաց :

82. Ամիշ.

Յիշուի ի Խոտուշուր . բայց արգեօք նոյն է ընդ Ամիճ՝ թէ այլ բոյս կամ պուտուղ, ստուգելի է :

83. Ամիր-իշխան կամ Ամիրաշխամ.

Ըստ Վանեցւոց . Ար . Համահիմ ԲԱՃ, ինչպէս վկայէ բժշկարան մի . « Համ հայիմ, որ է Թուրքերէն՝ Ամիրիշխանն . ինքն ի պարտիզներոյ մէջ կու բուսնի » : Ամիրա . գրէ . « Մինհահին տէրն ասէ, թէ Պօսրան-տֆրօզն (Պ . Պօսթան-էֆրուզ) , » և Սահիպ Ճամէհն ասէ, թէ Մուսի պին-Յէմրանէն լսեցաք՝ թէ ինքն Հապախի- » Պօսրանին է, և ի Շամ Հապախի-Նյապոսի կ'ասեն . և իր գունն խիստ կանաչ է, » և ծաղիկն սպիտակ է, և հունտն նման է Հապախին հընտին... Եւ Թուրքն այս » խոտիս Ամիրիշխանն կ'ասէ » : Ուրիշ բժշկարան կ'ըսէ . « Անուշահոտ ծաղիկ ունի գեղին, և մանր սերմն . յայգիքն լինի » : — Համահիմ և Հապախ՝ Ռեհան նշանակեն, ըստ Պէյթարայ և ըստ Թարգմանին . Ամիրտուլվաթի զանազուն վկայութիւնք զանազանն զԱմիրիշխանն և զՌեհան, բայց հարկ է որ մերձաւոր ըլլան . զխոնականք ալ կու տարբերին կարծեօք . Պարսից Պօսթան-էֆրուզը Համարին ոմանք զԱնթա . աամն, Amarantha, ոմանք ալ զԱնեմոնն կամ Պուտ, Anemone . Պանդուխտ վան . ցիին հեղինակն՝ ինչպէս Ամանկոտրուկին համար՝ այսպէս ալ Ամիրիշխանին՝ խոտ մը կ'ըսէ միայն — Վերոյիշեալ Հապախ կամ լաւ եւս Հապազ արարացի բառին հետը Նյապոսի յիշածն ալ՝ ըստ Պէյթարայ է իբր Նարաթացւոց Ռեհան . տեղ կամ երկիր կայ՝ որ Վաղձ նշանակէ, և հասարակօրէն անուշահոտ խոտեր . նոյն մեր Ամիրտ . ալ պզոր համար գրէ առանձին . « Հապաղի Նյապոսի՝ որ է Համահիմն, և ան » Գոսրանաի-Պօսրանին է, որ է Անուշան » . և ահա տարբեր՝ բայց մերձաւոր բոյս մ'ալ :

84. * Ամլանճ.

Ա. Իմիտ. Լ. Փ. Emblic. « Որ է Պ. Ամիրա. ինքն սեւ միրգն-ձն է, ինքն Հալի-
» լաներուն ցեղէն է. լաւն այն է որ սեւ լինի և պինդ լինի »: Ուրիշ բժշկարան
մ'ալ կ'ըսէ. « Ինքն զէտ կիտոր (զղթոր) է, և չիր կ'անեն, զկուտն կու հանեն: Ի
» Հնդկաց զայ »: — Թէ Պէյթար և Թէ Ամիրտ. այս պտղոյն՝ որ ինքնին դառնա-
համ է, շատ օգուտները և կերպ կերպ գեղ ըլլալը՝ կու գրեն:

85. * Ամլանճ.

Վերնոյն (Ամլանճ) պէս օտար լեզուի բառ կ'երեւի, բայց մեր Ամասիացին չի յի-
շեր զայն, այլ միայն ինչ ցեղէ ըլլալը և կու շրկէ հօն, ի Զանապ ըլ-խայլ, որ է
Զիւռազի. մենք ալ նոյնպէս ընենք:

86. * Ամրուսիա.

Յունական բառն է Ամբրոսիա, ուստի և Լ. Ambrosia, Փ. Ambrosie, Ռ.
Амброзия. Պէյթար ալ Բ տառը թողեր է, ուսկից կ'առնու Ամիրտ. և կու գրէ.
« Ինքն խոտ-ձն է որ շատ տերեւ ունի, և երեք երեք թիզ է յերկայնութիւն ճղերուն,
» և տերեւն նման է Սաղապի տերեւին, և հոտն այլ նման է: Եւ Թէ սպեղանի
» առնես՝ չի թողու որ իջուածք իջու ի մարդն »:

87. * Ալաւզնուէ.

Այս օտարալուր կամ խորթ բառն ասորերէն է, և յԱսորեաց լեզուէ թարգ-
մանեալ Գանիէլ վարդապետի Սաղմոսաց Մեկնութեան մէջ (ԶԳ. Սաղմոսի) կու
յիշուի, և բացատրուի այսպէս. « Աստուած իմ, արա զնա որպէս զԱնիա, որպէս
» զեղեգն առաջի հոգմոյ: Իսկ անիւս այս պն է՝ որ ի գլուխ Սպիտակ փշոց
» (Թուի Oxyacantha) սուփոր է բուսանիլ. և յորժամ հասանի օդ՝ փշոցն, առ-
» նուցու Անիւն ի հոգմոց, և ոչ տայ դադարումն նմա. այլ և յորժամ նստի
» յանկեան ինչ՝ ոչ կարէ զկայ առնուլ, բայց եթէ ոք կայցի զնա՝ Անիւն որ ի
» միխասահման եղեալ է ի մէջ տկար թւոցն սերմանց և փշոց, որ կոչի յԱսու-
» ռիա Ալաւզնուէ. և զոր օրինակ ուր անկցի նա՝ փուշս բուսուցանէ, այսպէս
» ուր շրջի անիւն՝ որ վարի յայտոցն », և այլն: — Յիշուած փշոցն կըրնայ յա-
տուկ անուան ըլլալ Սպիտակ-փուշ՝ մեր լեզուին, ինչպէս Փ. Epine blanche, ո-
րոյ լատինն է Oxyacantha ըստ յունարէնի, որ նշանակէ Որափուշ, և հայերէն ալ
կայ այս բառս, և յիշուի ի կարգին, Ռ. Боярышникъ. — Յիշենք որ այս ա-
նուան մերձաւոր են յունալատին Aizoos կոչուած բոյսը, որոց մին է ըստ մեզ
Լուսդեղն:

88. Այգէպրաս.

Յայտ է անուան բարդութենէն որ Պրասի կամ Փուռաթի տեսակ մ'է, և

ըստ հին բժշկարանին նոյն իսկ Գուռաթն. և է Փալիենոսի յունականին թարգմանութիւնն, ինչպէս և լատինն՝ Ampeloprasos.

89. Այգոյ գայլ. — Տես Գայլխոտ:

Այգոյ ծաղիկ. — Տես Գինէծաղիկ:

90. Այգու մատնի.

Այս ալ վերի գրուածին հետ նոյն կարծուի, բայց տես ի կարգին Մատիծաղիկ:

91. Այծակն.

Ատեփ. Ռոչքեան կ'ըսէ. « խոտ՝ որ է վայրի Ոչաֆ, (Թ. Եռւլաֆ, Վարսակ) Aegilops ». Այս և ուսումնական բառս իրաւ Այծ-ակն (Այծու աչք) թարգմանի ի յունարէնէ, բայց բուսաբանք ոչ Վարսակ՝ այլ տեսակ մի կաղնի ծառ կ'իմանան, խոզկաղնի:

Այծառ. — Տես Ածար:

92. Այծու մօրուք կամ Այծամօրուք.

Գրոց լեզուով կ'ըսուի Փօշմօրուք. զոր տեսնես ի կարգին: Նոյնն կ'ըսուի և Նոխազի մօրոք, որ նոյն բան նշանակէ, որձ այծ:

93. Այծպտուկ.

Ածպտուկ. — Խաղաղի տեսակ մի է. Թ. Խաթունն պարսկադի կամ Գիւլի մեհեհի:

94. Այծոտտիկ.

Պոնտոսի կողմերը տեղացոց ծանօթ և արմատն ուտելի բոյս մի է:

95. Անալուծ.

Խորենացոյ անուանեալ Ալխարհագրութիւնն Հայոց Գուգարաց աղխարհին բերոց մէջ առաին կու դնէ զայս, յետոյ քանի մ'այլ ծառ և պտուղ. բայց այս բառս ուրիշ դրոց մէջ ընծուղտ (Giraffe) կենդանին նշանակելով՝ զնոյն կարծեցին ոմանք. սակայն այդ կենդանին ոչ ի Հայս և ոչ անոր սահմանակցաց մէջ գտուի. ապա բոյս մի պէտք է ըլլայ ալխարհագրին այս տեղ յիշածը՝ ընդ Սերկեսլի, Տօսախի, և այլն, կամ թէ անունն այլայլած է:

96. Անանուխ. Անուխ. Անանիխ.

Մանօթ հոտաւէտ տերեւով բոյս, որ Ար. Նանա քալ կոչուելով, այս անուան

տակ գրէ Ամիրտ. « Ինքն յածվոց և վայրի լինի. լաւն ածվոցն է... Ասէ Պտ. » (Պատէհին) Թէ... Ուժովն և աղէկն այն է որ ածվոց լինի և թաժայ լինի և ի » շուքն շորնայ. տաքցնող է և կապող է... Էս իր փոխանն վայրի Դաղձն է » : Այս բոլոր անոնցմէ մէկն է՝ զոր Քրիստոս Տէր մեր՝ յանդիմանելով զՓարիսեցիս՝ յիշեցուց, Թէ « Տասանորդէք զԱնանուխ և զՍամիթ և զՉաման », (Մատթ. ԻԳ. 23), իբրեւ շնչին կամ հասարակ բաներ, ուսկից ազահութեամբ կ'ուզէին անոնք շահիլ՝ տասանորդ առնելով : Պէթար և Ամիրտ. Անանիայ շատ օգուտները յիշեն. Վաստակոց գիրքն կարճ կ'ըսէ (Գլ. ԳԳԴ). « Իւր օգուտն է՝ որ կերակրոց » կարօտ բերէ, և զործն կտրէ... և Թէ ի վերայ խոցոյ դնես՝ յաւիտեան այլ » չյաջողանար բնաւ » : — Լ. Mentha, Փ. Menthe, Ռ. Мята.

97. Հոռում Աննուխ.

Տարբեր ցեղով և ձևով, նման հոտով Անանիայ, ըստ Լ. Balsamina Suaveolens. Փ. Menthe de Coq կամ Grand Baume, Թ. Խարսեմա կամ Խրսեմանի :

98. Սարի Աննուխ.

Այսինքն Լեռնիցի կամ վայրենի, յիշի յԱխտարաց գիրս, և է անուշտ Լ. Mentha Silvestris. Փ. Menthe sauvage կոչուածն :

99. * Անապ.

Ար. անուն է Պատինճանի. ըստ Ստ. Շէհրիմանեան :

Անասքօսան. — Տես Ասպուզան :

100. Անգուժատ.

Լ. Galbanum, Հ. ալ Քաղքան կոչուած խէժ կամ հիւթն է, որ մեր գրոց մէջ ուրիշ շատ անուններ ալ ունի, ինչպէս Մաղթ, Կապնդեղ, և այլն : — Տես Անճիտան :

101. Անգուտան.

Հին բժշկարանն յիշէ Համեմոց հետ, բայց կըրնայ ըլլալ նոյն Անճիտանն :

102 * Անդարիոն.

Անունն յայտնէ օտար լեզու, բայց մենք չգտնալով զայն, յիշենք այս տեղ Ամիրտովաթի աւանդածը. « Ի լեռուն կու բուսնի, խոտ-մն է, Լուեազեանա (Սա. միթ) կու նմանի, և հոտն սուր է » :

103. * Անեմոն.

Յունարէն բառ, հով նշանակէ, ուսկից բոյսն ալ թարգմանաբար մեր լեզուի

մէջ ալ Հողմածաղիկ կոչուած է. Տնն զայս, այլ և զՊուտի Յիշուի ի բառս Պալինոսի. բայց այս բառից մէկ օրինակն ալ Աղբորդի ունդ (հունար.) կ'ըսէ ասոր համար: (Տ. Թիւ 48. 83):

104. Անծառամ.

Բառիս վանկից տեղափոխութեամբ յետուստ յառաջ՝ Յունաց Անաստ անունն կ'ըլլայ, և զնոյն նշանակէ. միայն թէ նոյն իսկ բառական նշանակութիւնն՝ չթուսող կամ մշտադալար՝ զանազան երկիր զանազան բուսոց կու տրուի. թէ և սովորաբար այսպէս կոչուածն է *Heliochrysum*. այսպէս և մեր ազգայինք այլ եւ այլ բոյս ճանչնան նոյն անուամբ: Մանանայի հեղինակն կ'ըսէ վայրի ծաղիկ՝ որ բուսնի անջրդի վայրեր, խիստ անուշահոտ, նարնջի դեղին գունով. բայց ուրիշներ՝ կարմիր գունով կ'ըսեն, (ինչպէս Մշակ, ԺԸ 88): Մեր բոշկապետն (Ամիրտ.) Անարիթիս կ'անուանէ, փոխանակ Ամարանթոնի, և կու գրէ. « Խոտ-մն է որ բարակ տեւ » բեւ ունի, որ ի Բացվենեկի տերեւ կու նմանի, և » զազաթն բոլոր կու լինայ, և զոյնն սկիբ գոյն կու նմանի, և գլուխն ի ծաթրու գլուխ կու նմանի. և թէ » հալի (զգեստուց) մէջ գնես՝ ցեցն զհալալն չուտէ, » փորձած է »:



Անբառամ.

Սալածորեցին ալ կ'երգէ.

« Մէկ անծառամ ծաղիկ մի կայ, ծաղիկ ծաղկեր ծաղկներուն.
Ամառ ձմեռ չի չորանար, հինըն պայծառ նըման նորուն »:

105. Իշու Անծառամ.

Աշխի հասարակ կամ տգեղ տեսակ մի գուշակուի: Յիշ Մշակ, (ԺԸ, 88):

106. Անծառ.

1. *Anthemis*, յատկապէս ի յունարէնն ծաղիկ նշանակէ, ամէն տեղ գտուած հասարակ ծաղիկ մ'ըլլալուն համար, և մեր լեզուով ալ շատ անուններ ունի, ինչպէս Գետնախնձոր, Խնձորխոտ, Երիցուկ (Փափաթիւ), և այլն, որք իրենց կարգին յիշուին: Պալինոսի բառից ընտիր օրինակ մ'ալ կ'անուանէ զԱնթիմիս՝ հայերէն՝ կոտջ ծաղիկ: — Բայց Հայք Անթիմ անուամբ ուրիշ ցեղ բոյս մ'ալ ճանչցեր են. վասն զի մեկնիշ վարդապետն Սողոմոնի Ուրախ լեր երիտասարդ բանին՝ կ'ըսէ. « Անթիմն բանլար է երեւելի, և բազմապատիկ ունի շուրջ գին, քեամբ զտերեւոցն լուսանման բողբոջն »:

107. Անիար.

Հուսաւորիշ իր վարդապետութեան մէջ առ Հայս՝ յիշած է այս ծաղիկս, ըստ Ազաթանգեղեայ, իբրեւ շատ գեղեցիկ, Վարդի և Յամարկի հետ:

108. Անիսոն Ծաղիկ.

Երեսնակն է, աամկորէն պտպէս կոչուած :

109. Անիսոն.

Լ. Anisum. Փ. Anis, Ռ. Анисъ.
 Լաւ կ'ըտ Սմիրտ. Թէ « Յայտնի է
 » ամենայն լեզուաւ. Պարսիկն Պա,
 » յինս ասէ. ինքն հունտ է անուշա,
 » հոտ, և Թ. Հագարբարս ասէ : Ա
 » ասծ են Թէ ինքն Հոռմցի Ըռգիա,
 » նին հունտն է... Ատէ Պտ... ինքն
 » երկու ցեղ է. այն որ Հոռմցին է՝ ի
 » Նամիսուն (Նանախաւ, Լ. Ammi)
 » կու նմանի. և այն որ Հոռմցի չէ՝
 » ի Ղրրամանէ (Cardamine, Զրկա
 » տեմի տեսակ) կու նմանի. և լաւն
 » այն է որ Հոռմցի լինի » :



Անկիտան. — Տես Անճիտան :

Անիսոն.

110. Անճիտանի Ծառ.

Վաստակոց գիրքն յիշէ (Գլ. ԺԴ). « Յորժամ տեսանես զկաղնին և զԱնճիտանի
 » ծառն՝ որ շատ պտուղ առնեն, անճրեւի նշան է » : Յունարէն բնագիրն այս
 ծառս գրած է Πιρος, որ է Լ. Ilex, և ըստ մեղ Սղոցի :

111. Անճիտու.

Լ. Fumaria. Փ. Fumeterre, Ռ. Дымяка. — Հայերէն կ'ըսուի և Շանքառակ,
 բայց պարսկերէնէ առած է, որ կու նշանակէ Թագաւորական բանջար, և նոյն
 անունն պէսպէս գրուի Շարառեծ, Շեռառեծ, Սարառիձ, և այլն. Ար. անունն ալ
 նոյնանիշ ունի, զոր մերայինք Թերեւս լաւագոյն Թարգմանած են Կանաչաց քաղա
 չոր. միայն՝ Թէ ասոնք և Թէ օտարք՝ կու շփոթեն զԱնճիտու ընդ Նուարտակի,
 զի շատ մերձաւոր և նման են. այսպէս բժշկարանն, « Սաթառիձ՝ որ է Անճ
 խտան » : « Անճխտո՝ որ է Շահթառան » : յետոյ, « Շէտարաձ՝ որ Թ. Զերքիչի
 կամ Սարքուչա, կու ասէ, և Հայն Նուարտակ. կ'աւելցընէ Սմիրտ. Թէ, « Եւ ի
 » Եղբնկան Արքաշխա կ'ասեն. և ինքն տակի կեղեւ է, հաստ և բարակ սլլ կու
 » լինի, և լաւն այն որ ի Հնդկաց գայ : Ասեր է Պտ. Թէ յԱզազ կու ասեն, և
 » ի Պարապրի լեզուաւ Լիոթոն (Lepidium). և ինքն շատ ցեղ է. և լաւն այն է
 » որ Իպն. ասեր է, Հնդին է կամ Պահրին է » : ասոր համար Շանքառեծ Հինտի
 կ'ըսուի — Անճիտուի շատ տեսակաց մէջ Corydalis alpina կոչուածն նշանա
 կուած է ի Ծաղկոցածորն Անի մայրաքաղաքի :

112. Անձրուծ կամ Անգրուտ.

1. Sarcocolla. փ. Sarcocollier, Ռ. Зѣрионское смолистое дерево. Թէ և խէժ կամ հիւթ մի կ'իմացուի այս անուամբ՝ բայց 'ի բուսականաց առաջ կու գայ. անունն առնուած է ի պարսկերենէ (Անգէրուդ), ուր գտուի ասոր լան: Ամիրտ. գրէ, « ինքն յայտնի խէժ-մն է. երկու ցեղ է, սպիտակ և կարմիր. լան այն է » որ սպիտակ լինի... Ասէ Պատէհին, թէ ինքն փշի մի խէժ է՝ որ Աշապաքա » ասեն. ինքն կարմիր և սպիտակ այլ կու լինի, երկուսն ալ ի մի փուշ, և յոր » ժամ արեգական տաքութիւն յինքն շատ հասնի՝ հին և կարմիր լինի. և այս » ցեղիս Անգրուդի վաղարգոն ասեն, և Բանձատա ասեն. և պարսկերէն Անգրու » ասեն: Եւ լեռոն մի կայ որ Լօհի Շապան՝ Ահազարտաճան կ'ասեն, անկից կու » ելանէ. լան այն է որ սպիտակ լինի և ի դեղնութիւն քշտէ և լեղի լինի »: — Բժշկարան մի նոր տնուն մ'ալ տայ Անձրութի՝ հայերէն, Գռնիճատակ. բայց Թուի թէ տարբեր բոյս մի. ըլլայ, որովհետեւ տակ կ'ըսէ. ինչ որ ըլլայ նշանելու է Գունիճ անունը:

113. Անղարա. — Տես Ապուղան:

114. Անդուն.

« Որ է վարդին Մնթինն (կամ մթինն), որ է Գիշախտ վարդ. հոտով վարդն չէ »: Այսպէս գրուած է յԱնգիտի-անպէտն:

Ա Ռ Ա Կ

Մ Ա Մ Ա Ի Կ Ե Ի Շ Ե Ր Ա Մ

Այս խօսքերով Մամուկն՝ ծաղրէր ըզՇերամն.

« Ահ Տէր Աստուած, այդ ի՞նչ զանդաղ կը շարժիս,

« Վրադ նայելով կը մային սիրտս և հոգիս.

« Տես ես ինչպէս, մի ժամուն

« Մէջ՝ կը ծածկեմ ամբողջ մի պատ վերէն վար

« Իմ թեւերով անհամար ու

— « Այո՛, կ'ասէ Շերամ՝ նըմա, հեղ ձայնով,

« Ի՞նչ կը գործես արադ շոյտ,

« Քոյ նուրբ բարակ թեւերով.

« Այլ ո՞վ, տա՛ւ, քաղէ անտի մի օգուտ:

« Ես կ'աշխատիմ, այո՛ կամաց,

» Սակայն այն տեղ իմ հինած թեւք.

» Մութ պատենիս մէջը քաշուած.

» Հասարակաց են զարդք՝ վայելք »: